Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ 250-Ա, ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ 251-Ա, ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ ԹԻՎ 252-Ա-261-Ա, ԱՊՐԻԼԻ 13-Ի ԹԻՎ ԹԻՎ 262-Ա, 263-Ա, 265-Ա, 266-Ա, ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ ԹԻՎ 268-Ա-271-Ա, 273-Ա-276-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 250-Ա, 251-Ա և 276-Ա որոշումների վերնագրերում, թիվ թիվ 250-Ա, 269-Ա և 276-Ա որոշումների բովանդակության մեջ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը կրճատ է գրառված։ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի՝ արգելվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումների կրճատումները։

Թիվ թիվ 250-Ա-252-Ա, 263-Ա, 276-Ա որոշումների վերնագրերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին, համաձայն որի՝ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի կրճատ անվանումը։ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ենթաօրենսդրական իրավական ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը։

Թիվ թիվ 250-Ա և 252-Ա որոշումների բովանդակության մեջ գործողությունները դադարեցվող իրավական ակտերի լրիվ անվանումները ճիշտ չեն գրառված։ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ենթաօրենսդրական իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը։

Թիվ թիվ 251-Ա, 253-Ա-260-Ա, 262-Ա, 275-Ա որոշումների նախաբաններում «հաստատված» բառն անհրաժեշտ է փոխարինել «սահմանված» բառով։

Թիվ թիվ 251-Ա, 253-Ա-260-Ա, 262-Ա, 265-Ա, 266-Ա, 275-Ա և 276-Ա որոշումների բովանդակության մեջ տրամադրված հասցեները թերի են գրառվել՝ բացակայում է անշարժ գույքի անվանումը (հողամաս, շենք, շինություն, բնակարան և այլն։

Թիվ 252-Ա որոշման նախաբանից անհրաժեշտ է հանել «,,Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի,» նախադասությունը, ինչպես նաև որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, այլ ոչ թե 33-րդ հոդվածի 3-րդ մասին։ Որոշման բովանդակությունում «Արթիկ համայնքի ղեկավարի՝» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «2022 թվականի հունվարի 26-ի» բառերը, իսկ «մասին» բառից հետո գրառված «2022 թվականի հունվարի 26-ի» բառերը հանել։ Որոշման հավելվածի 2-րդ կետում «4511 հոդվածի «1-ին եռամսյակ» սյունակում նշված

«8766.0» թիվը» բառերից հետո գրառված «փոխարինել «31866.0» թվով,» բառերն անհրաժեշտ է փոխարինել «թողնել անփոփոխ» բառերով: Որոշման հավելվածի 3-րդ կետում գրառված «Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 05, խումբ 1, դաս 1 «աղբահանում» տողի «1-ին եռամսյակ» սյունակում նշված «35361.4» թիվը փոխարինել «35361.4» թվով, «2-րդ եռամսյակ» սյունակում նշված «53561.4» թիվը փոխարինել «53561.4» թվով, «3-րդ եռամսյակ» սյունակում նշված «71561.4» թիվը փոխարինել «71561.4» թվով և «4-րդ եռամսյակ» սյունակում նշված «92261.4» թիվը փոխարինել «92261.4» թվով, ինչպես նաև՝» նախադասությունը անհրաժեշտ է հանել, քանի որ ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 05, խումբ 1, դաս 1 «աղբահանում» տողի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների սյունակներում փոփոխություններ չեն կատարվել:

Թիվ 261-Ա որոշման մեջ «Արթիկ» բառից առաջ չի գրառվել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի» բառերը, իսկ «Արթիկ համայնք» բառերից հետո չի գրառվել բնակավայրի անվանումը: Որոշման նախաբանում հղումը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին, ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշմանը սխալ է գրառված:

Թիվ 263-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում «Արթիկ համայնքի ղեկավարի» բառերից առաջ չի գրառվել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի» բառերը:

Թիվ 268-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին, համաձայն որի՝ ենթաօրենսդրական իրավական ակտի մասերին հղում կատարելիս նշվում են իրավական ակտի կրճատ անվանումը, կետի, ենթակետի կամ պարբերության համարը: Նախաբանում «թվական» բառը գրառվել է կրճատ: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ իրավական ակտում «թվական» բառը և դրա հոլովաձևերը գրվում են ամբողջությամբ:

Թիվ 269-Ա որոշման հղումը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման դրույթներին սխալ է գրառված:

Թիվ թիվ 270-Ա և 271-Ա որոշումների նախաբաններում հղումը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման դրույթներին սխալ է գրառված:

Թիվ թիվ 273-Ա և 274-Ա որոշումների 1-ին կետերում վարձակալության տրամադրման ժամկետները ճիշտ չեն գրառված:

12.05.2022թ.